

Կապալառուն պարտավոր է.

Ընդհանուր պահանջներ.

- ունենալ իր գործունեության իրավաչափ իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր իրավունքները, այդ թվում՝ բնապահպանական և բնօգտագործման թույլտվություններ, արտոնագրեր, փորձաքննական եզրակացություններ, հավաստագրեր և այլն,

- «Թեղուտ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացնել բնապահպանական, աշխատանքի անվտանգության և պատմամշակութային հուշարձանների պահպանության (բնապահպանությունը, աշխատանքի անվտանգությունը և պատմամշակութային հուշարձանների պահպանությունը միասին այսուհետ՝ ԲԱԱՊՀՊ) իր կողմից կիրառվող համակարգի վերաբերյալ տեղեկատվություն,

- բացահայտել և գնահատել իր կողմից կատարվելիք աշխատանքների ԲԱԱՊՀՊ վտանգները և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը աշխատանքներն սկսելուց առնվազն 5 օր առաջ ներկայացնել Ընկերությանը,

- Ընկերության հետ համաձայնեցված պարբերությամբ կազմել և Ընկերությանը ներկայացնել իր կողմից կատարվող աշխատանքների շրջանակներում ԲԱԱՊՀՊ առնչվող իրադարձությունների և միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն,

- վերահսկել իր աշխատողների կողմից ԲԱԱՊՀՊ պահանջների կատարումը:

Բնապահպանությանը վերաբերող պահանջներ.

Ընկերության տարածքում չկատարել որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել Ընկերության՝ ISO 14001 միջազգային չափորոշիչին սեփական գործունեության համապատասխանեցման ծրագրի իրականացումը և Ընկերության տարածքում աշխատանքի շրջանակներում հետևել այդ չափորոշիչի պահանջներին, այդ թվում (բայց չսահմանափակվելով).

- իր գործունեության արդյունքում առաջացած կենցաղային աղբը և վտանգավոր թափոնները տեղադրել ընկերության հետ գրավոր համաձայնեցված վայրերում,

- իրեն պատկանող տեխնիկական միջոցների, այդ թվում՝ փոխադրամիջոցների լվացումը և այլ տեսակի ինսամբը Ընկերության տարածքում իրականացնել Ընկերության հետ գրավոր համաձայնեցված կարգով,

- աշխատանքների կատարման համար իրեն հատկացված տարածքը պահել մաքուր վիճակում, չվնասել այդ տարածքի բուսական և կենդանական աշխարհը,

- Ընկերության տարածքում չօգտագործել ասբեստ (asbestos) և ասբեստ պարունակող նյութեր, պոլիքլորացված բիֆենիլ (PCB), պոլիքլորացված տերֆենիլ (PCT), օզոնային շերտը քայքայող նյութեր՝ քլորֆտորածխածին (CFC) և հիդրոքլորֆտորածխածին (HCFC), հալոգեններ, տետրաքլորմեթան, 1,1,1-տրիքլորէթան, մեթիլ բրոմիդ, հիդրոբրոմֆտորածխածին (HBFC), բրոմքլորմեթան:

- շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի (տարբեր ազդանյութեր, յուղեր և այլն) օգտագործումն ու պահպանությունն իրականացնել դրանց անվտանգության անձնագրերում նշված պահանջներին համապատասխան,

- ապահովել իր կողմից օգտագործվող, շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութերի պահման վայրերի կահավորվածությունը դրանց անվտանգության անձնագրերում նշված պահանջներին համապատասխան,

- հետևել, որ իր կողմից օգտագործվող, շրջակա միջավայրի համար վտանգավոր հեղուկների տարաները տեղադրված լինեն անջրաթափանց հատակի վրա՝ սահմանված չափանիշներին համապատասխանող երկրորդային տարողության մեջ,

- իր գործունեության հետ կապված, շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցության վտանգ ունեցող ցանկացած իրադարձություն (կապալի աշխատանքների վերաբերյալ Ընկերության կողմից հաստատված փաստաթղթերով չնախատեսված արտահոսք, արտանետում, պայթյուն և այլն) տեղի ունենալու դեպքում անհապաղ տեղեկացնել Ընկերության բնապահպանական բաժնին և կատարել վթարի հետևանքների վերացմանն ուղղված՝ բաժնի պետի կամ նրան փոխարինող անձի հրահանգները,

- գործունեության ընթացքում Ընկերության բնապահպանական բաժնի աշխատակիցների կողմից կատարվող ստուգայցերի ժամանակ բնապահպանական խախտումների (թերությունների) բացահայտման դեպքում անվերապահորեն կատարել դրանց անհապաղ վերացման նպատակով Ընկերության բնապահպանական բաժնի պետի կամ նրան փոխարինող անձի հրահանգները:

Աշխատանքի անվտանգությանը վերաբերող պահանջներ.

Ընկերության տարածքում չկատարել որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել Ընկերության՝ OHSAS 18001 միջազգային չափորոշիչին սեփական գործունեության համապատասխանեցման ծրագրի իրականացումը և Ընկերության տարածքում աշխատանքի շրջանակներում հետևել այդ չափորոշիչի պահանջներին, այդ թվում (բայց չսահմանափակվելով).

- իր աշխատակազմից նշանակել աշխատանքի անվտանգության առնվազն մեկ պատասխանատու, ով պետք է ապահովի Ընկերության տարածքում Կապալառուի կատարած աշխատանքների հետ պատճառահետևանքային կապ ունեցող վթարների կամ պատահարների (ներառյալ անհետևանք պատահարները) գրավոր արձանագրումը և ներկայացումը Ընկերությանը,

- գործունեության ընթացքում Ընկերության տեխնիկական անվտանգության բաժնի աշխատակիցների կողմից կատարվող ստուգայցերի ժամանակ խախտումների (թերությունների) բացահայտման դեպքում անվերապահորեն կատարել դրանց անհապաղ վերացման նպատակով Ընկերության տեխնիկական անվտանգության բաժնի պետի կամ նրան փոխարինող անձի հրահանգները,

- ի լրումն ՀՀ օրենսդրությամբ տվյալ աշխատանքների համար նախատեսված պահանջների՝ ըստ կիրառելիության ապահովել իր կողմից կատարվող աշխատանքների համապատասխանությունը հետևյալ իրավական ակտերի պահանջներին.

- [«Թեղուտ» ՓԲԸ տարածքում արտահագուստի և անհատական պաշտպանության միջոցների կրմանը ներկայացվող պահանջներ,](#)

- [Ընկերությունում երթևեկության անվտանգության կանոնակարգ,](#)

- ILO-OSH 2001 Guidelines on occupational safety and health management systems (IDT):

Պատմամշակութային հուշարձանների պահպանությանը վերաբերող պահանջներ.

Ընկերության տարածքում հողային աշխատանքներ կատարելու դեպքում հետևել «Նողային աշխատանքների ընթացքում հուշարձանների և այլ պատմամշակութային արժեքների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությունն ու անվթարությունն ապահովող ընթացակարգի վերաբերյալ» ուղեցույցին:

Ընկերությունն իրավունք ունի վերահսկել Կապալառուի կողմից ԲԱԱՊՀՊ պահանջների կատարումը՝ աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում, այդ թվում նաև պարբերաբար ստուգելով Կապալառուի մոտ ԲԱԱՊՀՊ կազմակերպական հրահանգների, ձեռնարկների և այլ փաստաթղթերի առկայությունը և գործնականում դրանց կիրառումը: Նման ստուգումները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում

- պաշտոնական փաստաթղթերի ստուգում, ներառյալ թույլտվություններ, լիցենզիաներ, և այլն,
- կապալառուի պայմանագրի առարկային վերաբերյալ հարցումներ Կապալառուի ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին,
- եզրակացությունների և փաստերի փաստաթղթավորում: